Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
նոյեմբերի 29 -ի N 841 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՄԱՍՆԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»

1.	**Ծրագրի նպատակը**	ՀՀ Արարատի մարզի Մասիսի քաղաքային համայնքում կառուցված Ընտանեկան մարզահամալիրին հարող տարածքում հիմնված Ֆրանկոֆոնիայի զբոսայգու մասնակի բարեկարգում, մասնավորապես՝ անհրաժեշտ շատրվանային և ցայտաղբյուրային համակարգերով համալրում
2.	**Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը**	Հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների մասով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություններ ստանալը
3.	**Բարեգործը**	Adibekian Family Foundation For Advancement (AFFA) a.s.b.l., 142-144 rue Albert Unden L-2652, Luxemburg «Ադիբեկյան ֆեմիլի ֆաունդեյշն ֆոր ըդվենսմենթ (ԱՖՖԱ) ա.ս.բ.լ.» ոչ առևտրային կազմակերպություն, Գագիկ Ադիբեկյան
4.	**Ծրագիրը կատարողը**	Սույն ծրագիրն իրականացվում է Մասիսի զարգացման հիմնադրամի կողմից: Իրավաբանական հասցեն՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս 0801, Հանրապետության 11 Գործունեության իրականացման հասցեն՝ ՀՀ, ք. Մասիս, Հանրապետության 11 ՀՎՀՀ 04227989
5.	**Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը**	Ծրագրի իրականացման վայրն է՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս, Ֆրանկոֆոնիայի փողոց 2 Բարեգործական ծրագրի բնագավառն է՝ քաղաքաշինական:
6.	**Ծրագրի բյուջեն**	48.145 եվրոյին համարժեք դրամ
7.	**Բարեգործություն ստացողը**	Մասիսի քաղաքային համայնք
8.	**Ծրագրի իրականացման տևողությունը**	Ծրագիրն իրականացվելու է 2019 թ. նոյեմբերի 29-ից մինչև 2020 թ. ապրիլի 30-ը:
9.	**Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը**	Ծրագրով նախատեսված ժամանակաշրջանում կատարվելու են հետևյալ միջոցառումները՝

		Միջոցառման նկարագրությունը	**Ֆինանսական միջոցների ծավալը** (հազ. դրամ)
		1. Զբոսայգու համար անհրաժեշտ շատրվանային և ցայտաղբյուրային համակարգերի ներմուծում	45,145 եվրոյին համարժեք դրամ
		2. Զբոսայգու բարեկարգման համար անհրաժեշտ շատրվանային և ցայտաղբյուրային համակարգերի տեղադրման և մոնտաժային աշխատանքներ	3,000 եվրոյին համարժեք դրամ
		Միջոցառումներն իրականացվելու են 2019 թ. նոյեմբերի 29-ից մինչև 2020 թ. ապրիլի 30-ը:	
10.	**Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**	**Ներմուծվող ապրանքներ**	**Նախատեսված գումարը** (հազ. դրամ)
		1. Զբոսայգու շատրվանային և ցայտաղբյուրային համակարգերի ներմուծում	45,145 եվրոյին համարժեք դրամ
		2. Շատրվանային և ցայտաղբյուրային համակարգերի տեղադրման ու մոնտաժային աշխատանքների հետ կապված ծառայությունների ձեռքբերում	3. 000 եվրոյին համարժեք դրամ
11.	**Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը**	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:	
12.	**Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ**	Սույն ծրագրի իրականացման նպատակով Մասիսի զարգացման հիմնադրամը համագործակցում է Մասիսի քաղաքապետարանի հետ:	

13.	**Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը**	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազոր մարմին: Հիմնադրամն անցնում է տարեկան ֆինանսական աուդիտ, որի արդյունքները հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ